

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

14. 12. 2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդոսյանը - մարզպետի տեղակալ
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ս. Ղուբաթյանը, Ս. Խալաթյանը, Ն. Սարգսյանը, Ա. Աղլոյանը, Ա. Սահակյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Հ. Անտոնյանը - ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության պետ

Օրակարգում`

1. Անցյալ ժամանակաշրջանում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հանձնարարվեց`

1. Մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Վ. Ասատրյանին, Տ. Բաղդոսյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին`

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզի համայնքների ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման տարեկան պլանային ցուցանիշներն ապահովելու ուղղությամբ:

2. Մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`
ա/ անհրաժեշտ ուշադրություն դարձնել ստորաբաժանումների աշխատակիցների կողմից աշխատանքային ներքին կարգապահության կանոնների պահպանմանը:

բ/ նախապատրաստել ստորաբաժանման տարեկան հաշվետվությունները, դրանցում ներառելով նաև վերլուծություններ, ինչպես նաև առաջարկություններ աշխատանքների բարելավման նպատակով:

/Ժամկետ` մինչև 01.02.16թ./

գ/ մինչև տարեվերջ վերհանել բոլոր ժամկետային և կատարման ենթակա հանձնարարականները և միջոցներ ձեռնարկել դրանց ժամանակին կատարման ուղղությամբ:

3. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի համայնքներում և ուսումնական հաստատություններում ամանորյա միջոցառումների պատշաճ կազմակերպման և անցկացման ուղղությամբ:

4. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին`

Դպրոցների կառավարման խորհուրդների ընտրությունների կարգի փոփոխման վերաբերյալ տեղեկացնել մարզի ուսումնական հաստատություններին և համայնքների ղեկավարներին` գործընթացը սահմանված կարգով իրականացնելու նպատակով:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ